Ճանաչի՛ր ինքդ քեզ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 10.04.2024թ. չորեքշաբթի թիվ 15 (1144)

Ավետումն Մարիամ Աստվածածնի

Եղիսաբեթի հղիության վեցերորդ ամսում **Աստված Գաբրիել** հրեշտակին ուղարկեց *Գալիլեայի Նազարեթ* քաղաքում գտնվող մի կույսի մոտ: Կույսի անունը **Մարիամ** էր: Նա նշանված էր **Հովսեփ** անունով մի մարդու հետ: **Մարիամը** աստվածավախ էր ու համեստ: **Հրեշտակը**, մոտենալով նրան, ասաց. *«Ուրախացի՛ր, շնորհալի՛ կույս, որովհետեւ բոլոր կանանցից **Աստված** ընտրել եւ օրհնել է քեզ»*: Այս խոսքերը լսելով՝ **Մարիամը** շփոթվեց: Տեսնելով **Մարիամի** շփոթությունը՝ **հրեշտակն** ասաց. *«Մի՛ վախեցիր, **Մարիա՛մ**, որովհետեւ **Աստծու** շնորհը ստացար: Դու ահա կհղիանաս եւ որդի կծնես եւ նրա անունը **Հիսուս** կդնես»*: **Մարիամը** շատ զարմացավ, որովհետեւ ամուսնացած չէր: **Հրեշտակն** այսպես բացատրեց. *«**Սուրբ Հոգին** կգա քեզ վրա, եւ **Բարձրյալ Աստծու** զորությունը քեզ հետ կլինի, որովհետեւ մանուկը, որ քեզնից է ծնվելու, սուրբ է եւ **Աստծու Որդի** կկոչվի: Քո ազգական Եղիսաբեթն արդեն ծերացել է եւ երեխա ունենալ չի կարող, բայց արդեն վեցերորդ ամիսն է, որ հղի է: Իմացի՛ր, որ **Աստծու** համար անկարելի ոչինչ չկա»*: **Մարիամն** ասաց. *«Ես **Աստծու** աղախինն եմ, եւ թող կատարվի այն, ինչ դու ասացիր»*: **Հրեշտակն** անհետացավ: Մի քանի օր անց **Մարիամը** շտապելով գնաց *Հուդայի* երկրի քաղաքներից մեկը, մտավ **Զաքարիայի** տունը եւ ողջունեց նրա կնոջը՝ Եղիսաբեթին: Երբ Եղիսաբեթը լսեց **Մարիամի** ողջույնը, նրա որովայնի մեջ շարժվեց մանուկը: Եղիսաբեթը, **Սուրբ Հոգուց** ներշնչված, բարձրաձայն ասաց **Մարիամին**. *«Բոլոր կանանցից **Աստված** քեզ է ընտրել եւ օրհնել է նաեւ այն զավակին, որ դու ես ծնելու: Ինձ համար մեծ երջանկություն է, որ **Տիրոջ** մայրն այցելում է ինձ: Երանի՜ քեզ, որ հավատացիր, որովհետեւ **Աստծո** կողմից քեզ ասված խոսքերը պիտի կատարվեն»*: **Մարիամը** շուրջ երեք ամիս մնաց Եղիսաբեթի մոտ, ապա վերադարձավ տուն:

Ըստ Ղուկասի Ավետարանի

Մարիամ Աստվածածնի *ավետման* *օրը*՝ **Ապրիլի 7-ը**, մեզանում նշվում է՝ որպես ***Մայրության եւ գեղեցկության տոն:***

տե՛ս՝ նաեւ էջ 7-10

ՀՀ նախագահ Վահագն ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ շնորհավորական ուղերձը



Սիրելի՛ կանայք,
Սիրելի՛ մայրեր,

Սրտանց շնորհավորում եմ՝ Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման եւ Մայրության ու գեղեցկության տոնեռի առթիվ: Այս երկու տոնի խորհուրդն ինքնին մարդկայինի ու աստվածայինի մեկտեղումն է եւ ինչպես Աստվածամոր, այնպես էլ յուրաքանչյուր կնոջ մայրությունն աստվածային ու նոր կյանքի արարման հրաշք է: *«Մայր»* գաղափարն ու երեւույթը մարդկության համար անսահման սիրո, անձնվիրության ու բարության մարմնացումն է:

Սիրելի կանայք, մայրեր, քույրեր ու դուստրեր, անգնահատելի եւ անչափելի է ձեր դերը մեր կյանքում եւ այս գեղեցիկ օրվա առթիվ կրկին շնորհավորում եմ ձեզ եւ ի սրտե մաղթում քաջառողջություն, անսպառ սեր, մայրության բերկրանք ու ամենայն բարիք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին, ի մասնավորի՝ բոլոր տիկնանց, օրիորդներին եւ մայրության բերկրանքին սպասող կանանց՝ Սուրբ Աստվածածնի Ավետման հոգենորոգ տոնի առիթով:

Աստվածամայրը իր առաքինի կերպարով, հեզությամբ ու աստվածսիրությամբ բարի օրինակ է բոլոր մայրերին ու օրիորդներին, ովքեր գովելի ջանքեր ու նվիրում են բերում իրենց ընտանիքների բարօրությանը եւ մեր ժողովրդի առաջընթաց կյանքին:

Սիրելինե՛ր, փորձություններով ուղեկցվող այս օրերին, երբ ազգային մեր սպասումներում մշտարթուն ակնկալությունը ունենք Տիրոջ օգնականության, Սուրբ Կույսին ուղղված հրեշտակի խաղաղեցնող ավետիսը հնչում է նաեւ ձեզ համար. ,Աստված ձեզ հետ է: Ձեր սրտերում ամուր պահեք առ Աստված հավատարմությունը, զորացյալ մնացեք հավատի, հույսի ու սիրո մեջ, որպեսզի Աստծուն ապավինած ու միմյանց աջակից՝ կարող լինեք դիմակայել բոլոր մարտահրավերներին եւ դեպի վերելք առաջնորդեք ձեր կյանքը:

Սիրելի՛ մայրեր եւ քույրեր, Միածնաէջ Տաճարի Սուրբ Խորանի առջեւ աղոթում ենք, որ Աստվածամոր բարեխոսությամբ Բարձրյալն Աստված Իր օրհնության եւ խնամքի ներքո պահի ձեզ եւ ձեր ընտանյաց անդամներին, որպեսզի ձեր սրտերում տեղ չգտնեն հուսահատությունը, ցավն ու տրտմությունը: Թող Տերը Իր գթառատ սիրով խաղաղ ու բարօր կյանք պարգեւի մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփյուռս աշխարհի:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն ՍԻՄՈՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ

Սիրելի՛ կանայք՝ մայրեր, քույրեր, դուստրեր, շնորհավորում եմ ձեզ՝ Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ:

Դուք պարգեւում եք կյանք, ջերմությամբ եք լցնում այն ընտանիքը, որտեղ ծնվել եք, նվիրում եք սեր եւ հոգատարություն ու այդպիսով սկիզբ տալիս եւ կարգավորում կյանքի շարունակական ընթացքը:

Մեծագույն հաճույք է ականատես լինել կանանց հաջողություններին կրթության, քաղաքականության, գործարարության, բժշկության եւ ցանկացած այլ ոլորտում, որտեղ նրանք գործունեություն են ծավալում:

Ցանկանում եմ շեշտել նաեւ, թե որքան հատկանշական է ձեր դերը մեր երկրի քաղաքական կյանքում: Կին քաղաքական գործիչների եւ քաղաքական կյանքում ներգրավված մասնագետների աշխատանքը տվել է մեր երկրին շրջադարձային արդյունքներ, եւ խրախուսելի է, որ տարեցտարի միայն ավելանա կանանց ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում:

Սիրելի՛ կանայք,

Եղե՛ք առողջ, երջանիկ, ներդաշնակ, սիրված եւ շարունակե՛ք լուսավորել աշխարհը ձեր քնքշությամբ, հոգատարությամբ ու նպատակասլացությամբ:

Կառավարության որոշումով

Կփոխհատուցվի դասագրքերի վարձավճարը



Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ **5-12**-րդ դասարանների սովորողների դասագրքերի ներդրումային գումարների ամբողջական փոխհատուցման նպատակով Կառավարության որոշմամբ հատկացվել է **97** միլիոն դրամ:

Հաշվի առնելով, որ **1-4**-րդ դասարանների բոլոր սովորողների դասագրքերի գումարները վճարվում են ՀՀ պետական բյուջեից, նշված փոփոխությամբ էլ կփոխհատուցվեն Լեռնային Ղարաբաղից բռնից տեղահանված 5-12-րդ դասարանների սովորողների դասագրքերի ներդրումային գումարները:

Այսպիսով՝ որոշման արդյունքում կապահովվի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ **17.000** դպրոցականների՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության հասանելիությունը, շարունակականությունը եւ մատչելիությունը:

ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ ԿԳՄՍ նախարարությանը 2024 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին կատարվել է վերաբաշխում՝ **116 միլիոն 580 հազար** դրամ գումարի չափով:

Գումարը կհատկացվի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրին՝ ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի Չեմպիոնների լիգայի եզրափակիչ մրցաշարի անցկացման համար ընկերությանն ամրացված շենքի մասնակի նորոգման աշխատանքների եւ հարակից ծառայությունների, ինչպես նաեւ գույքի ձեռքբերման նպատակով:

Որոշման արդյունքում կբարելավվեն Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի ենթակառուցվածքային պայմանները՝ հատկապես լուսային հատվածի եւ հանդերձարանների մասով:

Հիշեցնենք, որ ՈՒԵՖԱ-ի Գործադիր կոմիտեի որոշմամբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան կհյուրընկալի ՈՒԵՖԱ ֆուտզալի Չեմպիոնների լիգայի 2024 թվականի եզրափակիչը: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հայտը հաղթող է ճանաչվել Հունաստանի, Լիտվայի, Լեհաստանի, Իսպանիայի եւ Շվեյցարիայի ֆուտբոլի ֆեդերացիաների հետ մրցակցությունում: Այսպիսով՝ առաջին անգամ որեւէ խաղային մարզաձեւի եվրագավաթային եզրափակիչը կանցկացվի Հայաստանում: Կիսաեզրափակիչները կկայանան մայիսի 3-ին, իսկ երրորդ տեղի հանդիպումը եւ եզրափակիչը՝ մայիսի 5-ին: Բոլոր հանդիպումները տեղի կունենան Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Հ. Հ.

Աշխարհի հետ

Հանդիպումներ Փարիզում

Պաշտոնական այցով Փարիզում գտնվող ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** հանդիպել է Ֆրանսիայի ազգային կրթության եւ երիտասարդության նախարար **Նիկոլ Բելուբեի** հետ:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման համար՝ Ժաննա Անդրեասյանը կարեւորել է կրթության եւ երիտասարդության ուղղություններով առկա փոխշահավետ համագործակցությունը եւ դրա հետագա ընդլայնումը:

Հանդիպմանը քննարկվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆրանսերենի ուսուցիչների վերապատրաստման, փորձի փոխանակման եւ ուսումնական նյութերի արդիականացման հարցերը:

Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության աջակցությամբ հաջողությամբ ընթանում է *«Ֆրանսերենի խթանումը Հայաստանում»* փորձնական ծրագիրը: Ըստ նախարարի՝ ընդլայնվում է հանրակրթական դպրոցներում ֆրանսերենի խորացված ուսուցումը, ինչը նշանակում է, որ աշակերտները ոչ միայն ֆրանսերեն են ուսուցանում, այլեւ ֆրանսերենով սովորում Ֆրանսիայի պատմություն, աշխարհագրություն եւ այլ առարկաներ: Ժաննա Անդրեասյանը նաեւ տեղեկացրել է, որ տարեցտարի ավելանում է նաեւ ֆրանսերենով ուսուցմամբ ուսումնական հաստատությունների թիվը:

ԿԳՄՍ նախարարը գործընկերոջը ներկայացրել է նաեւ ՀՀ դպրոցներում իրականացվող *«Դպրոցական սնունդ»* ծրագիրը՝ առաջարկելով այս ուղղությամբ փորձի փոխանակում կազմակերպել:

Անդրադառնալով երիտասարդության ոլորտում հնարավոր համագործակցությանը՝ Ժաննա Անդրեասյանն առաջարկել է կազմակերպել հայ-ֆրանսիական երկկողմ ճանաչողական այցեր Ֆրանսիայի եւ Հայաստանի համայնքային երիտասարդական կենտրոններ: Միաժամանակ, առաջարկվել է դիտարկել փորձի փոխանակում՝ երիտասարդական քաղաքականության ոլորտում իրականացվող ծրագրերի եւ իրավական ակտերի մշակման ուղղությամբ:

Շնորհակալություն հայտնելով այցի համար՝ Նիկոլ Բելուբեն նշել է, որ համագործակցության առաջարկները բավականին հետաքրքիր են եւ պատրաստակամություն է հայտնել ընդլայնել առկա համագործակցությունը: Նախարարը հայ գործընկերոջը ներկայացրել է Ֆրանսիայում գործող հանրակրթական դպրոցների կառավարման մոդելները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Փարիզ կատարած այցի շրջանակում Ժաննա Անդրեասյանը հանդիպումներ է ունեցել նաեւ Քեդը Օրսեյի թանգարանի տնօրենի պաշտոնակատարի եւ Լուվրի տնօրենի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հնարավոր համագործակցության ձեւաչափերը: Հանդիպմանը մասնակցել է նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն **Մարինե Հակոբյանը:**

Ժաննա Անդրեասյանն Օրսեյի տնօրինությանն առաջարկել է այցելել Հայաստան եւ տեղում ծանոթանալ Հայաստանի ազգային պատկերասրահի ցուցադրությանը՝ նշելով, որ այն ավանգարդի եւ իմպրեսիոնիզմի հարուստ հավաքածու ունի: Քննարկվել են նաեւ Այվազովսկու եւ Սուրենյանցի աշխատանքների ցուցահանդեսները կազմակերպելու հնարավորությունները:

Ժաննա Անդրեասյանի հաջորդ հանդիպումը Լուվրի թանգարանի տնօրեն **Լորանս դը Կարսի** հետ էր, որին ներկա էր նաեւ Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն **Դավիթ Պողոսյանը:** Հանդիպմանը քննարկվել է Հայաստանի պատմության թանգարանի հետ համատեղ ցուցադրություններ կազմակերպելու հնարավորությունը:

Ժաննա Անդրեասյանը Լուվրի թանգարանի տնօրենին սեպտեմբերին հրավիրել է Հայաստան՝ ներկա գտնվելու Հայաստանի պատմության թանգարանի *«Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ»* նոր ցուցադրության բացմանը, ինչպես նաեւ տեղում քննարկելու համադրվող ցուցադրության ցուցանմուշների հարցերը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

* * *

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին մասնակցելու այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպումներ է ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի՝ մշակույթի, կրթության, հասարակական եւ հումանիտար գիտությունների հարցերով տեղակալներ **էռնեստո Օտտոնեի, Ստեփանիա Ջանինիի** եւ **Գաբրիելա Ռամոսի հետ:**

Հանդիպումներին ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարիտիրոսյանը** եւ նախարարության՝ ժամանակակից արվեստի վարչության պետ **Սվետլանա Սահակյանը:**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի՝ մշակութային հարցերով տեղակալ էռնեստո Օտտոնեի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ պատմամշակութային ժառանգության, ոչ նյութական ժառանգության պահպանության, մշակութային բազմազանության խրախուսման վերաբերյալ:

Այս համատեքստում խոսվել է Լեռնային Ղարաբաղում հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացման եւ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին՝ կարեւորելով Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցների հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ մշակութային իրավունքի իրացման հարցերը: Նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ Լեռնային Ղարաբաղի տարածքում վտանգված են հայկական պատմամշակութային շուրջ 5000 անշարժ հուշարձաններ:

Էռնեստո Օտտոնեն շնորհակալություն է հայտնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատանքներին Հայաստանի ակտիվ մասնակցության եւ աջակցության համար՝ նշելով, որ Հայաստանը տարածաշրջանում առաջատարն է հակամարտությունների արդյունքում մշակութային ժառանգության ուսումնասիրության, տեխնիկական առաքելություններին եւ վերականգնմանը մասնակցելու առումով:

Նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ՅՈՒՆԵՍԿՕ-ին *«Տաթեւի եւ Տաթեւի Անապատ վանական համալիրներ եւ Որոտանի հովտի հարակից տարածքներ»* հուշարձանին ուժեղացված պաշտպանության կարգավիճակ շնորհելու համար:

Նախարարը միաժամանակ տեղեկացրել է, որ *«Վերականգնելով Մոսուլի ոգին»* ծրագրի շրջանակում մարտ ամսին ավարտվել է Մատենադարանի մասնագետների այցը Էրբիլի Արեւելյան ձեռագրերի թվայնացման կենտրոն՝ նշելով, որ հայկական կողմը կարեւորում եւ խրախուսում է Մատենադարանի ներգրավումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ծրագրերում:

Նախարարը նաեւ կարեւորել է *«Մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության խրախուսման եւ պաշտպանության մասին»* կոնվենցիայի շրջանակում համագործակցության հետագա զարգացումը: Այդ համատեքստում նախարարը հաստատել է, որ 2025 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կկազմակերպվի համերգ՝ նվիրված ֆրանսահայ շանսոնյե, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Շառլ Ազնավուրին, իսկ սեպտեմբերին Հայաստանում կանցկացվի միջազգային համաժողով՝ նվիրված նշյալ կոնվենցիայի կիրարկմանը:

շարունակությունը՝ էջ 3

Ասուլիս

Գործընթացը տարեցտարի ընդլայնվում է

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Արաքսիա Սվաջյանը, Կարեն Գիլոյանը** եւ **Դանիել Դանիելյանը** հանդես են եկել մամուլի ասուլիսով՝ նվիրված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորմանը:

Ներկայացնելով արտադպրոցական ուսումնական հաստատությունների կամավոր ատեստավորման գործընթացում այս տարվա փոփոխությունները՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն ասել է. *«Այս գործընթացն ուղղված է մասնագետների կարողությունների զարգացմանը եւ գրանցված արդյունքներով՝ նաեւ ֆինանսավորման մեխանիզմների կիրարկմանը: Այս տարի ընդլայնվել է արտադպրոցական ուսումնական հաստատությունների ցանկը՝ կարող են մասնակցել շուրջ քսան ուղղությունների մասնագետներ, որոնցից 8-ն արվեստի, մնացածը՝ սպորտի ոլորտում: Հայտագրումը բաց է մինչեւ ապրիլի 20-ը: Ակնկալում ենք, որ կունենանք ավելի մեծ մասնակցություն նախորդ տարվա համեմատ, ինչը պայմանավորված է աշխատակիցների առավել իրազեկվածությամբ եւ մասնագիտությունների ցանկի ընդլայնմամբ»:*

Ըստ Արաքսիա Սվաջյանի՝ անցյալ տարի այս ոլորտում կամավոր ատեստավորումը հաղթահարել էր 46 աշխատակից. նրանց հետ պարբերական քննարկումներով վեր են հանվել խնդիրներ, որոնց հիմքով ներկայում կարգի փոփոխություն է շրջանառվում՝ այս տարվա մասնակիցների համար սահմանելով նոր կարգավորումներ. *«Մասնավորապես՝ գործող կարգով հավելավճարը տրվում է մասնագետի ծանրաբեռնածության համադրությամբ, սակայն փոփոխվող կարգում, անկախ ծանրաբեռնվածությունից, մասնագետը պետք է ստանա հավելավճարի ամբողջական չափաբաժինը»:*

Ատեստավորման արդյունքում հավելավճարը կտրվի հետեւյալ համամասնությամբ.

- 90-100 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 138 667 դրամ ֆիքսված լրավճար՝ անկախ դասավանդման ծանրաբեռնվածությունից,

- 80-89 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 112 000 դրամ ֆիքսված լրավճար՝ անկախ դասավանդման ծանրաբեռնվածությունից,

- 70-79 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 82 000 դրամ ֆիքսված լրավճար՝ անկախ դասավանդման ծանրաբեռնվածությունից:

«Եթե գործող կարգով 60-69 տոկոս հավաքածները համարվում էին ատեստավորված, սակայն հավելավճար չէին ստանում, ներկայում նրանք կստանան 55.333 դրամ ֆիքսված լրավճար՝ անկախ դասավանդման դրույքային ծանրաբեռնվածությունից: Ամբողջական հավելավճարն աշխատակիցները կստանան իրենց հիմնական աշխատավայրից, քանի որ կան համատեղությամբ աշխատող մանկավարժներ»,- հայտնել է Արաքսիա Սվաջյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի տեղեկացմամբ՝ 2023 թ. սպորտում կամավոր ատեստավորում անցկացվել է 4 մասնագիտությամբ՝ հունահռոմեական եւ ազատ ոճի ըմբշամարտ, ձյուդո եւ սամբո: Գրանցվել էր 126 մարզիչ-մանկավարժ, որոնցից ներկայում լրավճար ստանում են 8-ը:

«Հասկանալի է՝ առաջին անգամ էր անցկացվում, եւ շատերը դժգոհ էին տերմիններից, որոնք առօրյայում մի կիրառում ունեն, մասնագիտական գրականության մեջ՝ այլ: Այս տարի այդ խնդիրը չենք ունենա: Ավելացրել ենք եւս 8 մարզաձեւ՝ ծանրամարտ, բռնցքամարտ, աթլետիկա, բասկետբոլ, դահուկավազք, հրաձգություն, սեղանի թենիս, կարատե: Այս պահին հայտագրվածները քիչ են, սակայն մարզաշխարհը սիրում է հայտը վերջին պահին տալ. դեռ 2 շաբաթ ժամանակ կա, վստահ եմ, որ թիվը կավելանա»,- ասել է Կարեն Գիլոյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը կամավոր ատեստավորման գործընթացը մշակույթի ոլորտի համար կարեւորել է մի քանի տեսանկյունից:

«Ամեն անգամ երաժշտական, արվեստի դպրոցների մանկավարժների հետ հանդիպելիս քննարկվում է աշխատավարձի խնդիրը, եւ ատեստավորումը հրաշալի հնարավորություն է տալիս էականորեն բարձրացնելու այն: Մյուս կողմից էլ սա լավ հնարավորություն է մասնագիտական զարգացման եւ գիտելիքի թարմացման տեսանկյունից: Պետք է շարունակաբար քաջալերել՝ չերկմտելու եւ գնալու այդ քայլին: Ատեստավորված ուսուցիչը վստահություն է ներշնչում նաեւ ծնողների մոտ՝ որպես որակյալ մասնագետ: Այս պահին հաստատված է 190 հայտ: Մշակույթի ոլորտում եւս ուղղություններն ավելացվել են՝ դաշնամուր, սոլֆեջո, երաժշտական գրականություն, երաժշտական գրագիտություն, ազգային փողային նվագարաններից՝ պարկապզուկ, զուռնա եւ այլն, ազգային լարային նվագարաններից՝ քանոն, սազ, թառ եւ այլն, լարային գործիքներից՝ ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս, կերպարվեստ եւ կիրառական արվեստ,- հայտնել է բանախոսը եւ հավելել,- *ատեստավորման գործընթացը կարծրացած չէ. յուրաքանչյուր տարի ոլորտի գիտակների հետ քննարկվում են եւ լավարկվում կարգի դրույթները՝ գործընթացն ավելի մատչելի եւ դյուրըմբռնելի դարձնելով ուսուցիչների համար»:*

Հավելելով գործընկերներին՝ Արաքսիա Սվաջյանն իրազեկել է, որ առաջիկա օրերին ԳԹԿ-ն կհրապարակի բոլոր մասնագիտությունների ուղեցույցները՝ գրականության եւ հարցերի շրջանակի մասին:

«Ներկայում աշխատանքներ են իրականացվում գործնական բաղադրիչի ավելացման ուղղությամբ. հաջորդ տարվա համար նոր ձեւաչափ ենք նախատեսում»,- ասել է Արաքսիա Սվաջյանը:

Նշվել է նաեւ, որ արտադպրոցական հաստատությունների մանկավարժները կամավոր ատեստավորման նվազագույն շեմը չհաղթահարելու դեպքում հաջորդ տարի կրկին ատեստավորմանը մասնակցելու պարտավորություն չունեն: Անկախ արձանագրված արդյունքից՝ նրանք կարող են շարունակել մասնագիտական գործունեությունը:

Հանդիպումներ Փարիզում

սկիզբը՝ էջ 2

Հանդիպման վերջում ԿԳՄՍ նախարարը շնորհակալություն է հայտնել էռնեստո Օտտոնեին՝ Փարաջանովին նվիրված հոբելյանական միջոցառումները ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում հյուրընկալելու եւ միջոցառումներին մասնակցելու համար:

Նույն օրը կայացել է ԿԳՄՍ նախարարի հանդիպումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի տեղակալ Ստեֆանիա Ջանինիի հետ: Քննարկումները ծավալվել են Հայաստանում գործող ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնների, մշակույթի եւ արվեստի կրթության նոր ձեւաչափի, Աբու-Դաբիի որոշումների, ինչպես նաեւ *«Դպրոցական սնունդ»* ծրագրի շուրջ:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման համար՝ Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է 2023 թվականի հոկտեմբերին Հայաստան փաստահավաք առաքելություն այցի արդյունքների մասին, որոնցից մեկը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կրթության ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի կազմակերպումն էր: Նախարարն առանձնահատուկ կարեւորել է *«Դպրոցական սնունդ»* ծրագիրը, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել միջազգային գործընկերների շրջանում:

Ստեֆանիա Ջանինին ընդգծել է, որ *«Դպրոցական սնունդ»* ծրագիրն անչափ կարեւոր է, քանզի հատկապես փախստական եւ բռնի տեղահանված երեխաները հատուկ աջակցության եւ ուշադրության կարիք ունեն: Քննարկման ընթացքում նաեւ շեշտել է մշակութային կրթության վեկտորի զարգացման Հայաստանի հանձնառությունը:

Անդրադառնալով կրթության ոլորտին՝ ԿԳՄՍ նախարարը նշել է, որ Հայաստանը բազմաթիվ կրթական, այդ թվում՝ ներառական կրթության հաջողված ծրագրեր եւ նախաձեռնություններ ունի՝ առաջարկելով իրականացնել փորձի փոխանակում:

Ժաննա Անդրեասյանը կարեւորել նաեւ *«խաղաղ կրթության»* ապահովումը տարածաշրջանում, որն առանձնակի նշանակություն ունի ՀՀ-ի համար՝ նշելով, որ այս հարցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությունը կարեւոր է:

Նախարարը հաջորդաբար հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի հասարակական եւ հումանիտար գիտությունների հարցերով տեղակալ Գաբրիելա Ռամոսի հետ էր:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման համար՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Հայաստանն ակտիվորեն ներգրավված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակույթի եւ կրթության ոլորտներին վերաբերող կոնվենցիաների աշխատանքներին: Նա նաեւ կարեւորել է երիտասարդության հարցերով ոլորտային համագործակցության զարգացումը՝ ընդգծելով հայկական կողմի պատրաստակամությունը:

Գաբրիելա Ռամոսը տեղեկացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ծրագրերի մասին՝ ներկայացնելով երիտասարդության, ռասսայական խտրականության դեմ պայքարի ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքականությունը:

Ժաննա Անդրեասյանն իր հերթին տեղեկացրել է, որ ներկայում ՀՀ-ում մշակվում է *«Երիտասարդության քաղաքականության մասին»* օրենքի նախագիծը, որի վերաբերյալ ակնկալում են ստանալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագիտական եզրակացությունը:

«Մեզ համար հետաքրքրիր է նաեւ ընդդեմ խտրականության եւ ռասիզմի դեմ պայքարի շրջանակում համագործակցության ծավալումը, քանի որ Հայաստանը հանդես է գալիս տարածաշրջանում «Խաղաղ կրթություն» կարգախոսով եւ փորձում է առաջ մղել այդ գաղափարը»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Գաբրիելա Ռամոսն ընդգծել է, որ երիտասարդական քաղաքականություն իրականացնելիս ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարեւորում է միջմշակութային երիտասարդական ծրագրերի իրականացումը, եւ այս առումով ՀՀ փորձը շատ հետաքրքիր է:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի:

Պետական չափորոշչի ներդրումը դպրոցում

Տարվա լավագույները՝ տասը անվանակարգերում

Նախարար **Ժաննա Անդրեասյանը** հանդիպել է հանրակրթության պետական չափորոշչի ներդրման լավագույն փորձառության խրախուսմանն ուղղված նոր նախաձեռնության մասնակիցներին, որոնք այս տարի լավագույնն են ճանաչվել 10 անվանակարգում: Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը,** հանրակրթության վարչության ներկայացուցիչները:

Ժաննա Անդրեասյանը մասնակիցներին շնորհակալություն է հայտնել նախարարության առաջարկին արձագանքելու, մասնակցության եւ ամսվա լավագույն աշխատանքի հայտը կոնկրետ ուղղությամբ ներկայացնելու համար. *«Դուք ցույց եք տվել ձեր վերաբերմունքն այնպիսի կարեւոր բարեփոխմանը, ինչպիսին հանրակրթության նոր չափորոշչի ներդրումն է: Բազմաթիվ քննարկումներ ենք ունեցել, թե ինչպես նոր չափորոշչի ներդրումը դպրոցներում դարձնենք ավելի ընդգրկուն եւ լավագույն փորձը՝ առավել տեսանելի, եւ այս նախաձեռնությունն այդ նպատակով է արվել»:*



Ըստ նախարարի՝ հանրային խոսակցություններն առավելապես կենտրոնանում են եղած խնդիրների շուրջ, որը թեեւ շատ կարեւոր է, քանի որ թույլ է տալիս այս բարդ գործընթացը շարունակաբար բարելավել, սակայն մյուս կողմից էլ մանկավարժների աշխատանքն ու արձանագրված դրական առաջընթացը ստվերում են մնում. *«Դրական արդյունքներ գրանցած ուսուցիչների աշխատանքը կարող է ուղղորդիչ լինել մյուս դպրոցների ուսուցիչների, տնօրենների եւ աշխատակիցների համար: Այս մեխանիզմը ձեզ թույլ կտա պատմել ձեր աշխատանքի մասին, իսկ մեզ՝ ճանաչել կատարված աշխատանքը: Ձեր արձագանքը շատ բարձր ենք գնահատում, քանի որ, երբ որեւէ բան սկսում ես առաջին անգամ, որպես կանոն՝ շատ են մտավախություններ, կասկածանքներ եւ վախեր լինում: Նույնիսկ դրական նախաձեռնություններին հաճախ դժվարությամբ են մասնակցում, հետեւաբար կարեւոր է, որ դուք նախաձեռնողականություն եք ցուցաբերել եւ մասնակցել»,-* դիմելով ներկաներին՝ ասել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ հրաշալի աշխատանքներ են եղել, եւ ներկայացված յուրաքանչյուր աշխատանք մանրամասն ուսումնասիրվել է:

«Կարեւոր է, որ նոր չափորոշիչը դպրոցներում կայանա, կարեւոր է լավագույն փորձի մասին առավել իրազեկվել՝ միմյանցից սովորելու առումով»,- վստահություն է հայտնել Ժաննա Անդրեասյանը:

Ամսվա լավագույնը ճանաչված ուսուցիչները հնարավորություն ունեն այնուհետ մասնակցելու տարվա լավագույնի մրցույթին, որը ենթադրում է որոշակի պարգեւատրում. տվյալ ամսվա ներկայացված հայտերով ուսուցիչիչը դառնում է իրավասու՝ հայտնվելու տարվա լավագույնի ցանկերում:

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է մասնակիցների առաջարկներն ու դիտարկումները՝ գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու, թե՛ դրական կողմերի, թե՛ խնդիրների մասին խոսելու տեսանկյունից:

Նախարար Ժաննա Անդրեասյանը խոսել է նաեւ չափորոշչի արդյունքի անկախ գնահատման գործընթացից. *«Ուրախ ենք, որ ունենք չափորոշչի ՀԲ անկախ գնահատման արդյունքը, որը ցույց է տալիս, որ ամենակարեւոր խնդիրը չափորոշիչը լուծում է: Դա մեր երեխաներին տրամադրվող կրթության որակի բարձրացումն էր, կրթական առաջընթացի գրանցումը: Տավուշի մարզի արդյունքներով վեց ամսվա կրթական առաջընթացի արդյունք ենք գրանցել, ինչը, ի պատիվ մեր ուսուցիչների, իրականացվելով ամենաբարդ ժամանակահատվածում՝ համավարակի սահմանափակումների, ետպատերազմյան շրջանում, դրական է եղել: Սա առաջին հերթին վկայում է մեր համատեղ աշխատանքի մասին, որը պետք է արժեւորել եւ գնահատել: Մեր հաջողությունների մասին պետք է հաճախ խոսենք, որ դրանք մեզ ոգեւորեն եղած դժվարությունները հաղթահարելու ճանապարհին»:*

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը եւս շնորհակալություն է հայտնել կատարած աշխատանքի համար եւ շնորհավորել ամսվա լավագույնը լինելու առիթով:

«Նախատեսում էինք, որ բոլոր մարզերից մասնակցություն կունենանք, բայց դեռեւս չունենք այդ պատկերը: Դա պայմանավորված է առաջին փորձի բարդությամբ, եւ դուք եք այն համարձակները, որոնք ուղղորդող են մյուսների համար: Այս ձեւաչափով հանդիպումները շատ կարեւոր են՝ ձեզնից լսելու կարեւոր խնդիրների կամ հաջողությունների մասին, որոնք թե՝ մտածելու տեղիք են տալիս, թե՝ ոգեւորում են: Այդպիսով կհասկանաք ոլորտի խնդիրները եւ դրանց լուծման ճանապարհները»,- ասել է ԿԳՄՍ փոխնախարարը:

Հանդիպման ընթացքում նախարարը եւ տեղակալը պատասխանել են նաեւ ներկաների հարցերին, որոնք վերաբերել են բուհերի ընդունելության համակարգում կրեդիտային համակարգի ներդրմանը, ուսուցչի օգնականի, դպրոցների հոգեբանների գործունեությանը, գնահատման նոր համակարգին, ըստ նոր չափորոշչի քննությունների կազմակերպմանը եւ այլ հարցերի:

Պատասխանելով ավագ դպրոցի կրեդիտներով բուհ ընդունվելու հնարավորության մասին հարցին՝ նախարարը նշել է, որ կրեդիտային համակարգի ներդրման հիմքում կրթական արդյունքի փոխճանաչումն է, ինչը նշանակում է, որ բուհը պետք է ճանաչի կոնկրետ դպրոցի կրթական արդյունքը:

«Կրեդիտային համակարգի ներդրումը պետք է արվի փորձարկումից եւ արդյունքների վերլուծությունից հետո: Այժմ աշխատանքներ են ընթանում «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» նոր օրենքի նախագծի լրամշակման ուղղությամբ, որն առաջիկայում կդրվի հանրային քննարկման: Նոր նախագծում, հիմք ընդունելով ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման ծրագրի հիմնական պահանջները, բուհերի ընդունելության համակարգի նոր մոտեցումներ են ամրագրվելու»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ հույս հայտնելով, որ հանրային քննարկման փուլում դպրոցներն ակտիվ կլինեն՝ ներկայացնելով առաջարկներ:

Հանդիպման մասնակիցները ներկայացրել են նաեւ Հանրակրթության նոր չափորոշչի տեղայնացման իրենց փորձը: Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն **Արթուր Տաշչյանի** խոսքով՝ *«Առողջ ապրելակերպ»* խմբակի ներդրման սկզբնական շրջանում, երբ ծնողների մոտ տարատեսակ մտահոգություններ եւ չպարզաբանված հարցեր կային, ծնողների հետ կազմակերպել են հանդիպում՝ ներկայացնելով խմբակի ուսումնական ծրագիրը եւ նպատակը. *«Մեր մասնագետներին լսելուց եւ իրենց հուզող հարցերի մասին պարզաբանումներ ստանալուց հետո ծնողների հիմնական մտահոգությունները փարատվեցին»,-* պատմել է տնօրենը: Նա նաեւ նշել է, որ դպրոցում ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են սեմինարներ՝ գնահատման նոր համակարգի ներդրման վերաբերյալ:

Երեւանի թիվ 108 դպրոցի ուսուցչուհի **Լուսինե Մուշեղյանի** կարծիքով՝ նախագծային ուսուցումն աշակերտի կարողունակությունների զարգացման լավագույն մեթոդներից է, եւ կարելի է որոշ առարկաների դեպքում քննությունը փոխարինել նախագծային աշխատանքով:

Այս առնչությամբ՝ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը պարզաբանել է, որ նման հնարավորություն այս տարի տրված է Տավուշի մարզի դպրոցներին, որտեղ 9-րդ դասարանի ավարտին սովորողն իր ընտրությամբ կարող է քննություն հանձնել կամ նախագծային աշխատանք իրականացնել:

Հանդիպման ընթացքում ներկայացվել է Տավուշի մարզում նոր չափորոշչի ներդրման փորձը:

Ամփոփելով հանդիպումը՝ նախարարն իրազեկել է նաեւ, որ ակնկալում է լավագույն մանկավարժական աշխատողների ակտիվ մասնակցությունն այս տարի նախատեսվող ուսուցչական երկու համաժողովներին, որտեղ վերջիններս կարող են հանդես գալ նաեւ զեկույցներով՝ ներկայացնելով իրենց հաջողված փորձը:

«Զրույցներ եղեգի հետ»

ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Ալֆրեդ Քոչարյանը եւ Դանիել Դանիելյանը Կոմիտասի թանգարան-ինստիտուտում ներկա են եղել *«Զրույցներ եղեգի հետ»* խորագրով ցուցադրության բացմանը:

«Զրույցներ եղեգի հետ» խորագիրը կրող ցուցադրությունը հայկական եւ ֆրանսիական երաժշտարվեստում եղեգի գործածության, մասնավորապես՝ փողային նվագարանների պատրաստման մասին է: Ցուցահանդեսում ներկայացվել են պատմական փաստեր եղեգի կիրառման վերաբերյալ՝ վերհանելով մի շարք հիմնախնդիրներ՝ կապված նվագարանագործ վարպետների արհեստի եւ երաժիշտ-կատարողների գործունեության հետ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ֆրանսիայում:

Ցուցադրությունը երկխոսության մեջ է դնում հայկական ավանդական եւ ֆրանսիական բարոկկո երաժշտության մեջ կիրառվող փողային գործիքները (դուդուկ, զուռնա եւ հոբոյ) ու եղեգից պատրաստվող ձայնոցները: Այն ընդգծում է բույսի պատմական եւ ժամանակակից կիրառումը՝ լույս սփռելով արդի հիմնախնդիրների վրա՝ նվագարանագործ վարպետների արհեստից մինչեւ երաժիշտների գործունեություն:

Ցուցադրությունը նաեւ հարթակ է, որտեղ հանդիպում են պատմական աղբյուրներն ու ժամանակակից ստեղծագործությունները, արվեստագետներն եւ արհեստավորները, որոնք հաղորդակցվում են այս բույսի հետ եւ նոր շունչ հաղորդում *«եղեգի հասարակությանը»:*

Պետական չափորոշչի ներդրումը դպրոցում

Հանրակրթությունը՝ թվային հասարակությունում.

մարտահրավերներ, խնդիրներ, հեռանկարներ

«Համակարգիչը պետք է աշխատի, մարդը՝ մտածի» - սա համակարգչային սարքավորումներ եւ դրանց ծրագրային ապահովում առաջարկող հանրահայտ IBM ընկերության սկզբունքն է: Այդ սկզբունքն իրականացնելու համար անհրաժեշտ է կրթության համընդհանուր թվայնացում, ինֆորմատացում եւ քոմփյութերացում, երբ այն ամենը, ինչ հնարավոր է անել համակարգչով, թողնվի վերջինիս վրա: Մարդուն պետք է մնա ստեղծագործական երեւակայությունը եւ ստեղծագործողի ֆունկցիան:

Բայց ի՞նչ են նշանակում վերոնշյալ հանգուցային հասկացությունները:

Թվայնացումը տեղեկատվությունը թվային ձեւաչափի վերածելու գործընթացն է. այս ձեւաչափով տեղեկատվությունը կազմակերպվում է տվյալների դիսկրետ միավորների մեջ, որոնք կոչվում են բիթ: Վերջիններս կարող են առանձին հասցեագրվել բազմաբիթ խմբերում, որ բայթ են կոչվում: Թվայնացմանը զուգահեռ՝ կյանք է մտնում արհեստական բանականությունը, որն իր հետեւից փոփոխությունների մեկ այլ, անհամեմատելի ավելի ուժեղ ալիք է բերում: Արհեստական միտքն ակնհայտորեն արագացնում է թվայնացման պրոցեսը եւ փոխում է թվային սարքերի աշխատածեւը:

Ինֆորմատացումը պայմանների ու միջավայրի կազմակերպչական ապահովումն է ինֆորմացիոն (տեղեկատվական) ռեսուրսներին՝ հասանելիություն ունենալու համար:

Քոմփյութերացումը մարդու գործունեության բոլոր ոլորտներում համակարգիչների ներդրումն է: Հանրակրթության մեջ դա նշանակում է համակարգիչների կիրառումը որպես ուսուցման միջոց, ավելի լայն իմաստով՝ դրանց բազմանպատակ օգտագործումը ուսումնական գործընթացում:

Քանի որ գիտելիքները, ի հավելումն մեր բնական հիշողության, պահվում են համակարգիչների արհեստական հիշողության եւ համակարգչային հիշասարքերի մեջ, իսկ տեղեկատվական տվյալներն ու ծառայություններն իրացվում են գլխավորապես համակարգչային տեխնոլոգիաներով, թվայնացում, ինֆորմատացում եւ քոմփյութերացում հասկացությունները կքննարկենք միահամռության մեջ:

Կրթության թվայնացումն ունի շատ առավելություններ, այդ թվում՝

- Համակարգչի արագագործությունը եւ հսկայական հիշողությունը գործնականում ապահովում է ակնթարթային հասանելիություն ինֆորմացիայի (գիտելիքի) նշանակալից ծավալների: Հասանելիությունն անհատականացված է օգտագործողի պահանջներին (հետաքրքրություններին) համապատասխան եւ անհրաժեշտության դեպքում գտնվում է դասավանդողի հսկողության տակ: Այդ հսկողությունը կարող է իրականացվել համակարգչի միջոցով:

- Պատկերավոր ներկայացումը (տեքստային, ձայնային, գրաֆիկական, անիմացիոն, նկարներով, գունային նրբերանգով եւ այլն), երբ ընկալմանը կարող են մասնակցել մարդու տարբեր զգայարաններ:

- Մոդելավորումների հնարավորությունը-իրական օբյեկտների ինֆորմացիոն մոդելների (այդ թվում՝ դինամիկ) կառուցումը:

Դասերի այն փուլերի ընթացքում, երբ հիմնական ուսուցանող ազդեցությունը եւ կառավարումը փոխանցվում է համակարգչին, ուսուցիչն հնարավորություն է ստանում դիտել, ամրագրել սովորողների այնպիսի որակները, ինչպիսիք են՝ նպատակի գիտակցումը, ձեռք բերած նախկին գիտելիքների վերարտադրումը, չհերիքող գիտելիքները պատրաստի աղբյուրներից քաղելու հանդեպ հետաքրքրվածությունը, ինքնուրույն փնտրտուքները: Դա ուսուցչին հնարավորություն է տալիս ձեւավորել սեփական ստեղծագործական հարաբերությունը սովորողի հետ:

Ուսումնական գործողությունների համար նմուշօրինակների փոխանցումը առաջադրանքների կամ համակարգչային ծրագրերի միջոցով, սխալների պատճառների վերլուծությունը թույլ են տալիս սովորողին աստիճանաբար սովորեցնել ինքնավերահսկողության:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների թափանցումը կրթության ոլորտ ուսուցչին թույլ է տալիս որակապես փոխել ուսուցման ձեւերի բովանդակությունը, մեթոդները եւ կազմակերպման ձեւերը:

Թվայնացվող կրթության մեջ էական կարող է դառնալ այլ հանգամանք եւս՝ արդյունավետ **ազգային տեղեկատվական պաշարների** ձեւավորումը եւ դրանց նկատմամբ ազատ հասանելիությունը (այդ թվում՝ հայրենագիտական, մշակութային, հայ նորամուծական մտքի եւ այլ բովանդակության):

Ելնելով վերոնշյալից, կրթության մեջ **թվային տեխնոլոգիաների** ներդրման ու աստիճանական ընդլայնման **գլխավոր նպատակը** փորձենք համառոտ ձեւակերպել այսպես. **դա սովորողների ինտելեկտուալ հնարավորությունների ուժեղացումն է թվային հասարակության մեջ, ի վերջո՝ կրթության որակի կտրուկ բարձրացումը:**

Իսկ ի՞նչը կարելի է համարել հանրակրթության **թվայնացման խնդիրներ:**

1. Մասնագետների տեղեկատվական մշակույթի ձեւավորումը:

2. Ուսումնական գործունեության ստեղծագործական եւ մտավոր բաղադրիչների դերի բարձրացումը:

3. Կրթության տարբեր տեսակների (ուսումնական, հետազոտական եւ այլն) ինտեգրումը:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների հարմարեցումը սովորողի անհատական առանձնահատկություններին:

5. Ուսումնական գործընթացի ծրագրային-մեթոդական կատարելագործումը:

Ակնկալվող վերջնարդյունքները, որ կարող է իր տեսլականում ունենալ ուսուցիչը, բխում են հենց թվայնացման նպատակներից ու խնդիրներից: Առանձնացնենք մի քանիսը:

Ա) Աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացումը:

Բ) Միջառարկայական կապերի խորացումը, գիտելիքը որպես միասնական համակարգ ընկալելը:

Գ) Անհրաժեշտ տեղեկատվության որոնման օպտիմալացումը եւ ծավալի ավելացումը:

Դ) Մտածողության տարբեր եղանակների զարգացումը:

Ե) Բարդ իրավիճակում կողմնորոշվելու, հաղորդակցվելու ունակությունների ձեռքբերումը:

Զ) Տեղեկատվական մշակույթի ձեւավորումը:

Է) Խնդիրը կամ իրավիճակը մոդելավորելու կարողությունը:

Ը) Փորձարարական-հետազոտական գործունեություն իրականացնելու եւ այլ կյանքի ***հմտությունների կարողություններ:***

Հանրակրթության թվայնացումը նշանակում է որակապես եւ սկզբունորեն **նոր մեթոդների** ներդրում: Դա, ամենից առաջ, **ուսուցման երկխոսության ձեւն է,** ընդ որում՝ համակարգչի հետ երկխոսության ակտիվությունը եւ բովանդակությունը չի սահմանափակված ոչնչով, բացի ավտոմատացված դասընթացի կառուցվածքից: Հենց ուսուցչի եւ աշակերտի պարբերական երկխոսությունն է բոլոր ժամանակներում եղել ուսուցման ամենաինտենսիվ եւ խորը ձեւը, ավելի խորը, քան ինքնուսուցումն է կամ պասիվ դասախոսությունը: Հենց երկխոսություններն են, զուգակցված գործողությունների հետ, ընկած հին հունական դպրոցների մեծ մասի հիմքում, դրանք նաեւ ֆիզիկայի հռչակավոր դպրոցների՝ Ռեզերֆորդի, Բորի, Կապիցայի, Լանդաուի, Ֆեյնմանի կոլոքվիումների հիմքում են եղել: **Հայ մանկավարժական միտքն** էլ ունի հաջողված օրինակներ, օրինակ՝ Գ. Բրուտյանի *«Իմաստասիրական երկխոսությունները»,* որտեղ գիտնականը հայ դասական գրական-գեղարվեստական ստեղծագործությունների, համաշխարհային գրականության եւ արվեստի գլուխգործոցների, գիտության նվաճումների վերլուծությամբ, Իմաստասեր-Ընթերցող ձեւի մեջ փորձում է համոզմունքը դարձնել գիտական-փիլիսոփայական աշխարհայացք:

Բայց, հեռու չգնանք, հենց երկխոսության ձեւն է, որ թույլ է տալիս ծաղկում ապրի ժամանակակից կրկնուսույցների *«տնային դպրոցը»:*

Համակարգչով ուսուցման դեպքում սովորողն ինքն է ընտրում ուսուցման տեմպը կամ բովանդակությունը (վերջինս նաեւ դասընթացն է ավտոմատ կարգավորում՝ հաշվի առնելով հարցերին աշակերտների տված պատասխանների վերլուծությունը): Այս հանգամանքն էլ զանգվածային ուսուցման մեջ լրիվությամբ իրականացնում է **անհատական ուսուցման** հրաշալի գաղափարը:

Այսօր իսկ մեր դպրոցում համակարգիչներով իրականացվում են մաթեմատիկական մոդելավորում, գործարար խաղեր, հաշվարկային փորձեր վիզուալ լաբորատորիաներում, ինչը թույլ է տալիս իրականացնել **պրոբլեմային ուսուցում,** այն առավելագույնս մոտեցնել ստեղծագործող ճարտարագետի, գիտնականի, արտադրության ղեկավարի աշխատանքի մեթոդներին:

Թվայնացմամբ բացարձակապես նոր իմաստ են ձեռք բերում հեռավար ուսուցումները, նույնիսկ՝ էքսկուրսիաները (դրանց կարող են մասնակցել նաեւ ինչ-ինչ պատճառով տանը մնացած աշակերտները, հրավիրյալ մասնագետներ):

Թվայնացումը կարեւոր է **ներառական խնդիրներ** լուծելու դեպքում: Ընդ որում, հնարավոր է ուսուցման մեջ *«ներգրավել»* հայտնի դասագետների, գիտնականների՝ օգտագործելով նրանց վարած տեսադասերը, հարցազրույցները:

Թվայնացմամբ հնարավոր է նաեւ դառնում ուսուցման **հիմնարարությունը** զուգորդել **կիրառականության** հետ, որոնք առանձին մանկավարժական ուղղությունների անկյունաքարային հասկացություններ են:

Համակարգիչները, որպես տեխնիկական միջոց (գործիք), համապիտանի են եւ ճկուն: Նույն համակարգչային լսարանում կարելի է անցկացնել փաստորեն ցանկացած առարկայի դաս, պայմանով, որ ունենանք ավտոմատացված դասընթացների ծրագիր:

Մեր դպրոցում արդեն ձեւավորված ավանդույթ կա՝ համակարգչային լսարանում այս կամ այն առարկայի դաս անել, թեպետ դրանք հաճախ ինտեգրված բնույթ ունեն եւ վարվում են մեկից ավելի ուսուցիչների կողմից:

Այժմ խոսենք կրթության թվայնացման հետ առաջ եկող **մարտահրավերների** մասին: Կարող է տպավորություն ստեղծվել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը արդարացված է միշտ եւ ամենուր: Երբեմն դա ամենեւին այդպես չէ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաներն ունեն առանձնահատկություններ, որոնց հաշվի չառնելը ավելի շատ վնաս, քան օգուտ կբերի: Անվերահսկելի հրապուրանքը ՏՏ-ներով կբերի սոցիալական փոխազդեցության ու անհատականության կորստի: Հոգեբանության լեզվով ասած՝ դա նշանակում է մտքից գործողության անցնելու խնդիր: Մարդը սովորում է աշխատել ծանոթ համակարգերով, այն դեպքում, երբ պրակտիկ գործունեության տրամաբանությունը բոլորովին ուրիշ է: Այդ խնդիրը կարող է չծագել միայն նրանց մոտ, որոնց ապագա մասնագիտությունը IT ոլորտն է:

Որոշակի դժվարություններ են ծագում երբ աշակերտներն օգտվում են *«որոնել»* ծառայությունից: Դա ամենից առաջ կապված է ազատության հետ, որից այնքան էլ հեշտ չէ ճիշտ օգտվել: Գտնված ինֆորմացիայի ոչ գծային կառուցվածքը աշակերտին գայթակղում է դուրս գալ ենթադրյալ հղումներից: Հետո՝ կա ***«ինֆորմացիոն աղմուկի»*** կամ ***«ինֆորմացիոն աղբի»*** պրոբլեմը, որով լիքն է համացանցը:

Նորից դիմենք հոգեբանությանը: Մարդու կարճաժամկետ հիշողությունը սահմանափակ հնարավորություններ ունի: Միջին վիճակագրական մարդն ունակ է վստահորեն միաժամանակ գործողություններ կատարել միայն յոթ տարբեր մտային կատեգորիաների կամ օբյեկտների հետ: Այդ պատճառով էլ, երբ աշակերտին միաժամանակ ցուցադրում են տեքստ, որն ուղեկցվում է ձայնով (խոսքով), ցուցադրում են մի քանի նկարներ, անիմացիոն էֆեկտներ եւ գրաֆիկներ, արդյունքը շատ արդյունավետ չի կարող լինել: Նա շեղվում է ինֆորմացիայի մի տիպից մյուսը եւ այդ ընթացքում բաց է թողնում կարեւոր ուսումնական տեղեկություններ: Եվ հետո՝ մարդիկ տարբերվում են ինֆորմացիան ընկալելու տեսանկյունից: Կախված այն բանից, թե ուղեղի որ կիսագունդն է առաջատարը, մարդն ավելի լավ ընկալում է կերպարներ կամ տրամաբանական կառուցվածքներ: Երբ մի սահիկաշարում կա եւ մեկը, եւ մյուսը, կորցնում ենք բոլորը:

շարունակությունը՝ էջ 6

Հանրակրթությունը՝ թվային հասարակությունում.
մարտահրավերներ, խնդիրներ, հեռանկարներ

սկիզբը՝ էջ 5

Պետք է նաեւ հաշվի առնել, որ ինֆորմացիոն տեխնոլոգիաների թույլատրելիից շատ օգտագործելը կարող է բացասաբար ազդել առողջության վրա:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ հասարակության, այդ թվում՝ նաեւ կրթության շարունակվող թվայնացումը այլընտրանք չունի: Այդ դեպքում որո՞նք են թվայնացման հեռանկարները տեսանելի ապագայում:

*1. **«Կա խնդիր-չկա խնդիր»:** Այսօր արդեն խնդիրը վերլուծել եւ ձեռք առնել միջոցներ՝ առանց համակարգչային մշակման, սկզբունքորեն հնարավոր չէ: Գլխավոր բարդությունը՝ պարզել բոլոր անհրաժեշտ պարամետրերը՝ դրանց կապերը բոլոր իրական գործընթացների հետ, մշակել արդյունավետ լուծումների տեխնոլոգիաներ:*

*2. **«Յուրաքանչյուր մասնագետին՝ սիրված զբաղմունք»:** Ցանկացած մասնագիտական գործունեություն կարելի է բաժանել 2 մասի: Առաջինում այն գործարար գործընթացներն են, որոնք տվյալ մասնագետների մոտ բացասական զգացմունքներ են առաջացնում: Ուսուցիչների մոտ, օրինակ, դա կարող է լինել տետրերի ստուգումը: Երկրորդում այն ամենն է, ինչը տվյալ մասնագետն անում է հաճույքով: Ավելի հաճախ անդուր է միապաղաղ, կրկնվող աշխատանքը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաները հենց այդ աշխատանքը կարող են վերցնել իրենց վրա, հաճելին թողնելով մարդուն:*

*3. **«Յուրաքանչյուր սովորողին՝ անհատական կրթական հետագիծ»:** Սա ավելին է, քան ուսուցման համար ընտրված ծրագրերն ու դասընթացները: Դրա մեջ են ուսուցման հաջորդականությունն ու տեմպը, որն հաշվի է առնում աշակերտների ընդունակությունները, կուտակած գիտելիքը, անձնային որակները: Փոքրիկ օրինակ. աշակերտը պահուստների շտեմարանից խնդրում է նյութեր նոր թեմայի վերաբերյալ, եւ համակարգը, հաշվի առնելով, թե նրա մոտ որ կիսագունդն է առաջատարը, ընտրում է համապատասխան նյութը:*



*4. **«Գիտելիքներ՝ առանց «բաց տեղերի»»:** Աշակերտի գիտելիքների թերությունները մեծ ճշտությամբ ախտորոշում է հանակարգիչը:*

*5. **«Ուրախ է միասին քայլելը»:** Աշակերտը հաճախ մտածում է, որ սովորելը ծնողներին է պետք: Ինքը վաղուց որոշել է, որ այդ առարկան իրեն պետք չի գալու: Ծնողները կարծում են, որ ամեն ինչ երեխային դպրոցը պետք է սովորեցնի, իրենց գործը պայմաններ ապահովելն է: Ուսուցիչներն էլ համարում են, որ իրենց պարտականությունը՝ գեղեցիկ եւ ճիշտ պատմելը եւ խստություն ցուցաբերելն է, մնացածը՝ աշակերտի ու ծնողի պրոբլեմն է: Ուսուցման մեջ պատասխանատվության բաշխման արատավոր շրջապտույտ է սա:*

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, հաղորդակցման ճիշտ ու օգտակար ձեւը գտնելու համար՝ կարող է արմատապես փոխել իրավիճակը:

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Արթիկի թիվ 3 ավագ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցչուհի

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Հանրահաշիվ»* եւ *«Երկրաչափություն»* առարկաների դասախոսի, *«Խոհարարական գործ»*, *«Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում»* մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլների) դասավանդողների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ առարկայի դասախոսի պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձեւ 1),

- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 4),

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***2024թ. ապրիլի 10-ից մինչեւ ապրիլի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:30-16:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից,*** Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք.Երեւան, Բուռնազյան 143:

Մրցույթը տեղի կունենա ***2024թ. ապրիլի 25-ին՝ ժամը 12:00-ին,*** Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17 32, (091) 11-34-98 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի *«Խնձորուտի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի հասարակագիտության (7 դասաժամ), ինֆորմատիկայի (8,5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (29 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***ապրիլի 10-ից մինչեւ ապրիլի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***ապրիլի 30-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 65-75-96 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի *«Իջեւան քաղաքի Մկրտիչ Մարտիրոսյանի անվան հ. 5 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

